Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 10.12.2021թ. թիվ 2113930840 որոշումն անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման թողնելու մասին

<<24>> 12 2021թ. 7-13- 19495 ք.Երևան

Ճանապարհային ոստիկանության պետ, ոստիկանության գնդապետ Ե. Կարապետյանս, վերանայելով Հարություն Հարությունյանի ՄԴ/102497-21 դիմումի քննարկման արդյունքում ստեղծված նյութերը՝

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Թամանյան փողոցի 1 շենքի 28-29 բնակարանի բնակիչ Հարություն Հարությունյանը Ճանապարհային ոստիկանությանը հասցեագրած դիմումով խնդրել է վերանայել վարչական տույժ նշանակելու մասին 10.12.2021թ. թիվ 2113930840 որոշումը՝ նշելով, որ տվյալ հատվածում արգելող ճանապարհային նշան չկա և չի երևում մայթը:

Դիմումի քննարկման արդյունքում պարզվել է, որ վարչական ակտն ենթակա է կատարման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

<<Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին>> օրենքի 3-րդ հադվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթի իրավախախտման հատկանիշների պարզման փուլում իրավախախտումը հիմնավորող ապացույցը իրավախախտումն ամրագրած տեսանյութն է կամ լուսանկարը, որը պարունակում է նաև տեխնիկական միջոցով արձանագրված տվյալները: Ըստ նույն հոդվածի 2-րդ մասի՝ որպես իրավախախտումը հիմնավորող ապացույց վարչական կամ դատական կարգով բողոքարկման վարույթում կարող են օգտագործվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 251-րդ հոդվածով նախատեսված ապացույցները:

<<Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին>> օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ մայթ հասկացությունը օրենսդրությամբ սահմանված կարգով հետիոտնի տեղաշարժվելու համար նախատեսված երթևեկելի մասին հարող կամ դրանից որևէ եղանակով առանձնացված ճանապարհի տարր է:

ՀՀ կառավարության <<Ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների ու պայմանների ցանկը հաստատելու մասին>> 28.06.2007թ. թիվ 955-Ն որոշման 61-րդ կետի համաձայն՝ արգելվում է տրանսպորտային միջոցների երթևեկությունը կողնակներով, մայթերով և հետիոտնային արահետներով՝ բացառությամբ կանոնների 81-րդ կետում նշված դեպքերում մայթեզրին կայանելու նպատակով մանևրելիս: Թույլատրվում է, այլ հնարավորության բացակայության դեպքում, ճանապարհային և կոմունալ սպասարկման ծառայությունների մեքենաներին երթևեկել, իսկ անմիջապես ճանապարհի կողնակների, մայթերի կամ հետիոտնային

արահետների մոտ տեղակայված առևտրային և այլ օբյեկտներ սպասարկող տրանսպորտային միջոցներին՝ ամենակարճ ճանապարհով մոտենալ դրանց՝ խոչընդոտ չհանդիսանալով հետիոտներին և ապահովելով երթևեկության անվտանգությունը:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 27-րդ մասի համաձայն՝ տրանսպորտային միջոցների վարորդների կողմից մայթերին կայանելը կամ մայթերով երթևեկելը, բացառությամբ ճանապարհային նշաններով թույլատրված դեպքերի, ինչպես նաև ստորգետնյա կամ վերգետնյա հետիոտնային անցումներով երթևեկելը՝ առաջացնում են տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով:

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 10.12.2021թ. թիվ 2113930840 որոշման հիմքում դրված տեսանյութը հստակ ապացուցում է, որ դիմումատուի վարած տրանսպորտային միջոցը 03.12.2021թ. ժամը՝ 12:15-ին Երևան քաղաքի Արշակունյաց - Գրիգոր Լուսավորիչ – Ագաթանգեղոս փողոցների խաչմերուկի հատվածում երթևեկում է հետիոտնի տեղաշարժվելու համար նախատեսված երթևեկելի մասին հարող և դրանից առանձնացված մասով, այսինքն մայթով:

Այսպիսով, դիմումատուի արարքում ակնհայտ է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 27-րդ մասի զանցակազմը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 10.12.2021թ. թիվ 2113930840 որոշումը թողնել անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հանձնելու օրվան հաջորդող օրը և կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:
3. Սույն որոշման օրինակն ուղարկել Հարություն Հարությունյանին:

Ե. Կարապետյան

Կատարող՝ Ա. Ալեքսանյան
Հեռ. 011-54-47-83